# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԿԱՐԵՆԻՍԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Կոտայքի մարզ, գ.Կարենիս E-mail Karenis1@mail.ru
Հեռախոս: (0226) 6 00 09


Ս/Հ 01-2
«06» «փետրվար» 2015թ.

<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/22> ծածկագրով
գնման ընթացակարգով շրջանակային
համաձայնագրեր կնքած մասնակիցներին

<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/22> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Կարենիս համայնքին սպասարկող մեքենա-մեխանիզմների կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրերի համաձայն, կից ներկայացվող թիվ «ԿՄԿԳ-ՇՀԱՊՁԲ-11/22-1» պայմանագրի նախագծի (Հավելված N3) N1 Հավելվածում նշված ապրանքները: Ապրանքի մատակարարման պայմանները ներկայացված են կից ներկայացվող պայմանագրի նախագծում:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել գ. Կարենիս <Գյուղ Մուշ>-ի փող. N 28 հասցեով, Նվեր Ալեքսայանին, մինչև 2015 թ.փետրվարի20-ը, ժամը 13 $^{00}$-ն:

Հայտերը կբացվեն Կարենիսի գյուղապետարանի շենքում գ. Կարենիս <Գյուղ Մուշ>-ի փող. N28 հասցեում, 2015 թ. փետրվարի 20-ին ժամը 13 $^{00}$-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը (Հավելված N1) և գնային առաջարկը (Հավելված N2): Հայտը անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/22 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով, ընդ որում՝ հաղթող մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ ըստ չափաբաժիններում նշված յուրաքանչյուր գնման առարկայի միավորի համար, նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, ՀՀ նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ կետի 7-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

-նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

-նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցմամբ)՝ հղում կատարելով ՀՀ նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Կից ներկայացվում է կնքվելիք պայմանագրի նախագիծը և հայտով ներկայացվելիք պաստաթղթերի օրինակելի ձևերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ